ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

№ ԳՀԾՁԲ-20-7/9-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 04.02.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 05.05.2020թ. կնքված № ԳՀԾՁԲ-20-7/9-3 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) և ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 25-ի N 2186-Ա որոշումը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N ԳՀԾՁԲ-20-7/9-3 գնման պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2021թ. մայիսի 1-ը, պայմանով, որ այն կիրառվում է մինչև 2021թ. ՀՀ ՊՆ ծախսային ծրագրով նախատեսված նույն գնման առարկայի գնման մրցակցային ձևով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսվա վերջին օրը:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

Սույն Համաձայնագրով Վաճառողի կողմից մատուցված ծառայությունների միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 1,999,800 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2.1 Գնորդն իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարումը կկատարի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1 Հավելվածը բաղկացած է 1 թերթից, հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ գլխավոր վարչության պետ	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ ք. Երևան, Զ. Սարկավագի 157 «Արարատբանկբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510023294810100 ՀՎՀՀ 00803554 Տնօրեն՝
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ս. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
հ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	
1	դերձակի ծառայություններ /Կիտել՝ կիսաբրդյա, ուսադիրներով և տաբատ՝ կիսաբրդյա, երկարաճիտ կոշիկների մեջ դրվող անհատական պատվեր/	դրամ	1	1,999,800	1,999,800	Պայմանագրի իրավունքները և պարտավորությունները ծագում են համապատասխան Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համաձայնագիր կնքելու միջոցով
		լ-կ	100	19,998		
	Ընդամենը	1,999.800 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Քանաքեռի կարի ֆաբրիկա » ՍՊԸ Տնօրեն՝

Ս. ԱԶԱՏՅԱՆ